



Մ Ի Օ Տ

ՏԱՍԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԲԻՒ 1.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆՎԱՐ 31
1875.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ

Տարեբեր անցան, և ահա տարի միեւս անցաւ. նոր տարի մ'ալ կը յաչորդէ, սմանք մեան, սմանք կ'ապրին. որ աւուր՝ և կեանք մահու կը յաջորդեն. սիրտս կը արտփի, միտքս կը յազդի, հոգիս կ'ամբոխի. կը ժողովեմ, զանազան տխուր յիշատակներ կ'արթնան սրտիս մէջ, որոց մասին սիրտիս կ'սրտնեմ և սիրտիս հետեւեալ խորհրդածութեանս մէջ կը գտնեմ:

Մինչ ցարդ կարծէի, որ աշխարհը մարդոց վայելից կայանն է, կարծէի որ մ'աչք կարգ և կանոն ունի. կարծէի, որ բարիներն անվիշտ կը մնան աշխարհի վրայ և չարերը միայն կը տառա-

պին, կարծէի որ Արեգակն արդարնէրուն վրայ միայն կը ծագի, և անձրեւին անոնց վերայ միայն կը տեղայ. կարծէի որ հասուն տղուները միայն ծառն կը թափին, մտադոչ ծառին կային զարնոց չ'ըլտր, վարդը չը բացուած չը թառամիր, ճրագին իւրը չ'ստացած չը մարիր. վերջապէս իւրեւ տխար մարդ կարծէի, որ աշխատողն իւր աշխատութեան արդիւնքը, հարուստն իւր գիլած հարստութիւնը, թագաւորն իւր թագն ու դահլիճն մշտնջենապէս պիտի վայելին, ահա այս ամեն կարծիքներս կը տեսնեմ որ ամեն որ կը վառին, և անցած տարւոյն մէջ քանի՞ քանի անգամ վառեցան:

Անուրանալի ճշմարտութիւն մ'է, որ մարդն հոգէն առաւ իւր բաժինը, հողուն պէտք է սայ, հոգէն գոյաւորեցաւ և 'ի հող պիտի գառնայ, ամեն սք այս ճանապարհէն պիտի անցնի եւ պիտի խմէ մահու բաժակը. սակայն գաղտնիքն այս է, որ ոչ օրն յայտնի է և ոչ ժամն. ամենօրեայ դէպքերը կը վիպեն' թէ մահը մարդոյ վրայ կը հասնի 'ի ժամու և 'ի տարածամու, մահը կը զոհէ իւր ճիրանին մանուկ և երխտասարգ. կատարեալ և ծեր, հարուստ և աղքատ: Երբէք մէկը չը վտահի իւր հասակին և առողջութեան վրայ, չը վստահի իւր առողջութեան և զօրութեան վրայ. վասն զի մեռնիլը կարգ չ'ունի. մահը խիզ՞ և խորութիւն չ'ունի, օրհասը պայմանաժամ չ'ունի, նորա սրայմանաժամը Ամենակալ Նախախնամողին ձեռքն է: Կը տեսնես սրտանի մը ամենայն կատարելութեամբ լի, մտքով զօրաւոր, վիճակաւ հարուստ, և ահա մահուան գերանդին չը խնայեր նորա կենաց նորահիւս թելը կտրելու, կը տեսնես ուրիշ մը մարմնով տկար, երեսը գոյն չը կայ, աղքատութեամբ թշուառացած, ցամաք հացի կարօտ, այսու ամենայնիւ մահը նորա չը մօտենար, կը տեսնես աշխոյժ երխտասարգ մը գեղեցիկ բազմանքներով լըուած, և ահա յանկարծ մահուան զոհ կ'ըլլայ, իսկ անդին զուռամեալ ծեր մը, վերջին աստիճան անցօր, աչքերուն մէջ լցոյ չ'է մնացած, իւր մահը կը խնդրէ, այնու աւանանջիւ գեռ կ'ապրի: Ո՛հ, այս ի՞նչ անհասկանալի գաղտնիք է, այս ի՞նչ անխմանալի խորհուրդ է, եւ ո՞վ կարող է այս գաղտնեաց թափանցել և Աստուածային անօրինութեան գեղեցիկ գանգաւորը, քանի որ նորա անօրինութիւնը անխմանալի է, նորա մե-

ծութիւնը բարձր է քան զամենայն մեծութիւն, նորա խորհուրդը խոր է և նորա կամքը անհամեմատ վեր է մեր կամքէն. նա աէր է կենդանեաց և մեռելոց, նորա քանդածը չը շինուիր և նորա շինածը չը քանդուիր, նա կարող է գառաւորները յիմարեցնել և թագաւորները գերի վարել: Ուստի մենք ամենքնիս ալ Աստուծոյ ձեռքն ենք, մեր ունեցածն ալ անորն է, մենք ալ անորն ենք, նա երբ կամի մեր ունեցածն մեր ձեռքէն կ'առնու, և երբ կամի զմեզ կը կոչէ. մեր ձեռքէն առած ժամանակ չենք կարող սրտնջալ և զմեզ կոչած ժամանակ չենք կարող չ'երթալ, ըստ սրում մեր ունեցածները մերը չ'են, իբրեւ աւանդ են. և մենք աւանդապահ պանդուխտ ենք աշխարհիս վրայ. անշուշտ պիտի երթանք օր մը հոն, ուր գնացին մեր սիրելիներն ու զաւակները, մեր եղբայրներն ու ազգականները, նորա գնացին մեզմէ բաժնուելով, մենք մնացինք անոնցմէ բաժնուելով: Այս բաժանման մէջ բնականաբար կը տրտմինք. բայց պէտք չէ յուսահատուելու չափ տրտմինք եւ սգանք, վասն զի այս հեթանոսական գործ է, չափազանց սղալ, չափազանց սղալ հեթանոսական սովորութիւն է, Քրիստոսն ութիւնը այս գիրքը չ'ընդունիր, մենք յոյս ունիմք վերստին կենդանանալ և մխիթարութիւն ունինք վերստին տեսնել մեր սիրելիները: Հեթանոսներն այս յուսոյ մխիթարութենէն զուրկ են: Մեր հաւատքը մեզ կ'ուսուցանէ որ մեր բաժանումն յաւիտենական չ'է, այլ ժամանակաւոր, մեզմէ բաժնուողները կը վաճառենք մեզ հետ միանալ և մենք կը վաճառենք զանոնք տեսնել, և միմէ կարելի է անոնց նորէն յաշխարհ գառնալ, կարելի է երկնային հոգիներն այ վերին Երուսաղէ-

մի քաղցրութիւնը մերժել և աշխարհիստանդիտութեան դիմել , մի թէ կարելի է անժամանակ յարութիւն առնել , ոչ երբէք . այլ սէտք է իմանալ որ ճանապարհորդութեան կարգը մերըն է , մենք ստիպուած ենք երթալ անոնց մօտ , ստիպուած ենք թողուլ զաշխարհ , վասն զի մերը չէ . ստիպուած ենք յանձնել մեր մարմինը հողուն , վասն զի վճուուած է . եւ ստիպուած ենք հեռանալ աշխարհէն վասն զի մեր հայրենիքը չէ . այլ մեր հայրենիքը երկինքն է , մեր սեպհական տունը այն տեղ է , մեր երջանիկութեան կայանը և առաքինութեան յաղթանակը այն տեղ է , երաւնական կեանքը անգ պիտի վայելենք : Այս է Նախախնամութեան անօրէնութիւնը , այս է մահկանացու մարդոց վախճանը :

Ուստի քանի որ աշխարհիս մէջ սրանդուխտ ենք եւ ճանապարհորդ , քանի որ մահուան պոյմանաժամը մեզնէ ծածկեալ է , ինչո՞ւ աշխարհիս պատրանաց նշաւակ եղած՝ յաւիտենական կեանքը անցաւորին կը զոհենք . անժամանակը ժամանակաւորին և հոգին մարմնոց հաճոյից կը մատնենք , առանց գիտնալու թէ երբ է բաժանման օրն ու ժամն : Որչափ անտարբերութիւն և անզգայութիւն : Թշուառ մարդ , ոչ գէպքերէն կը դգաստանայ , ոչ պատուհասներէն կը սարսի և ոչ Աւետարանական ճշմարտութեանց ահանջ կը դնէ , մի կողմէն մի օր կամ մի ժամ ապրելու ապահովութենէ զուրկ լինելը զգալի կերպիւ կը տեսնէ , այնուամենայնիւ միւս կողմէն երկար տարիներ ապրելու պատրաստութիւններ կը տեսնէ : Մէկը ահագին տուններ կը շինէ նստելու համար , ուրիշ մը թաղաւոր կ'ըլլայ տիրելու համար , ուրիշ մը հարստութիւններ կը զիղէ

վայելելու համար . ուրիշ մը համալսարաններու մէջ տարիներ կը զոհէ՝ ամեն գիտութիւն գլխուն մէջ լեցնելով , բնութեան գաղտնեաց թափանցելու համար . սակայն մահը , տարաժամ մահը , անխտիր ամենքն ալ հողով կը պսակէ , յոյց տալով աշխարհի , որ չըկայ տեւական հանգիստ , չըկայ ճրջմարիտ ուրախութիւն աշխարհի վրայ . աշխարհը օտար , տեսածնիս օտար , ունեցածնիս օտար , մարմիննիս ալ օտար : Արդ՝ այս ամենը յայտնի ըլլալով ինչո՞ւ ուրեմն մէկըմէկ կը գղենք , մէկ զմէկ կը թշնամանենք , մէկըմէկ կը մատնենք , մէկ մէկու կը նախանձինք , մէկ մէկու ձեռքէն կը յափշտակենք , զրկեալը կը տառապի . անմեղը կը բողբէ , թշուառը կը հառաչէ . խկ մենք տակաւին անզգայութեան փոսին մէջ կը գործենք՝ ինչ որ խղճի դէմ է , կը խօսինք՝ ինչ որ ճշմարտութեան հակառակ է . կը հաւատանք՝ ինչ որ անստոյգ է : Ո՛հ , այս ինչ հակառակ ընթացք է մեր բուն վախճանին եւ նպատակին . որուն է արդեօք մեռնելու կարգը եւ որուն է յաղթանակը : Այս անցաւոր կենաց սուպարէզին մէջ բռնաւորն է տիրող թէ զրկեալը . ճնշողն է վնասող թէ ճնշեալը . հալածողն է ուրախ թէ հալածեալը , հարստանէ հանգիստ թէ աղքատն . խաչողն է յաղթող թէ խաչեալը . որուն է արդեօք մահուան կտրգը : Ահա այս է ամենամեծ գաղտնիքը , զոր Ատուած ծածկած է մեզնէ մեր բարութեան համար , ծածկած է օրն ու ժամը , որոյէս զի սթափի բռնաւորն իւր բռնութիւններէն , Գողձնողն իւր ճնշումները , արթնցընէ խաչողն իւր ապառաժ սիրտը , չըվտահի հարուստն իւր հարստութեան վրայ , թաղաւորն իւր փառաց և պերճութեան վրայ , զօրաւորն իւր

զօրութեան վրայ, այլ գիտնան, որ մահը վաղահաս է, օրհասն յանկարծական է, աշխարհիս ամեն բաներն ունայն են, երազ են, առ աչօք տեսիլներ են: Երբ այս ամենը մտրդ մտնէ դամ մտածէ և իւր խորհրդածութեց նիւթ ընէ և ընդ նմին իւր միտքը առ Աստուած բարձրացնէ, ալ ինչպէս կը համարձակի աշխարհի հետ սերտ կապով կապուիլ և մտմտոյ հաճոյից գերի ըլլալ. հոգի տուժել և երանական մտիթարութենէ զրկուիլ:

Ուրեմն մենք մահուն անստուգութեան յիշատակը նպատակ ունենալով ամեն վարկեան արթուն և պատրաստ ըլլանք, աշխարհ տուժենք եւ հոգի շահինք, ժամանակաւորը զոհենք եւ յաւիտենականը վաստկինք, որ մերձ կայ առ մեզ. այն ատեն մահը չէ կարող իշխել մեր վրայ, այլ մենք մահուան կ'իշխենք, այն ատեն մահը մեզ համար կեանք և անմահութիւն կ'ըլլայ, այն ատեն մեռնելէն երբէք չենք ստկար, այլ ուրախութեամբ կը գիւմենք նման այն պանդուխտ ճոնապարհորդին, որ իւր պանդխտութեան օրերուն մէջ կատարեալ խոհեմութեամբ վարուելով, կեանքը լաւ տնօրինած, վաստակները օրինաւոր կերպով պահած, միշտ հայրենիքը նպատակ ունենալով շարունակ պատրաստ կը գտնուի. երբ ճանապարհ կ'ենէ, իւր սիրելիները տեսնելու յուսով սիրտը ուրախութեամբ կը բաբախէ, այս

պէս ալ, եթէ մենք աշխարհս օտար երկիր ըլլալը ճանչնանք, եթէ մեր այս պանդխտութեան օրերը խոհեմութեւ արթնութեւ անցնենք, եթէ մեր յաւիտենական հայրենիքը շարունակ յիշենք, այն ատեն մենք ալ մահը իբրեւ բուն հայրենիք տանող ճանապարհ մը կը ճանչնանք և նորա հասած ատեն անկէ չենք սարսափիր, վասն զի Առաքելոյն ըսածին պէս այս աշխարհիս մէջ մնալ լիք քաղաք չունինք. մեր քաղաքս արթնութիւնը երկիրն է, ուր որ մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս և երջանկաց դատը կը գտնուին, հոն պիտի երթանք. մեր բոլոր կեանքը հոն երթալու պատրաստութի մ'է: Ուրեմն ամեն վարկեան այս ճանապարհորդութեան համար պատրաստ գտնուինք, վասն զի սչ օրը գիտենք և սչ ժամը և վասն զի կու գայ գիշեր, որուն մէջ մէկը չէ կարող գործել:

Նոր պարգեւ մը համարինք Նախախնամութենէն ներկայ տարին, նոր առաքինութիւններ գործենք, նոր բարիքներով ճոխանանք, նոր թեւերով թեւաւորինք. վասն զի ո՞ գիտէ թէ մենք եւս նոր տարւոյս հետ պիտի չըթուջինք դէպ ՚ի յաւիտենականութի, վասն զի ինչպէս թաւա հին տարին, թաւան շատ մարդիկ աշխարհէս, այսպէս պիտի թուջին նորն եւս, և պիտի թուջին շատ մարդիկ եւս դէպ ՚ի յաւիտենականութիւն :

Մ. Վ. Կ.